

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՍԹՐԵՍ ԹԵՍՏԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ԼԼՈՆ ԱԼԻԽԱՆՅԱՆ

ՀՊՏՀ «Ֆինանսներ» ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. սթրես թեստ, «համանման խմբեր», վարկային ռիսկ, շուկայական ռիսկ, արտարժութային ռիսկ, տոկոսադրույքի ռիսկ

Վարկային կազմակերպությունների ֆինանսական կայունության գնահատման և ռիսկերի կառավարման համար առանձնահատուկ արժեք է ներկայացնում սթրես թեստը: Ռիսկերի ներքին կառավարման համար սթրես թեստավորումը վերահսկողության¹ գործիքակազմի էական մասն է կազմում: Վերահսկողները կարող են նաև օգտագործել սթրես թեստերը բացահայտելու համար ֆինանսական համակարգում առկա թուլությունները, առաջ եկող ռիսկերը և փոխկապվածությունները: Սթրես թեստերը կարող են օգնել ի հայտ բերել տեղեկատվության ճեղքվածքներ, որոնց կանդիդատներն հետագա վերահսկողական հետաքննությունները և գնահատել առանձին կազմակերպությունների ռիսկի կառավարման ունակությունները: Իհարկե, այն պետք է իրականացվի հասկանալով, որ սթրես թեստի նպատակը ապագա իրադարձությունները հասկանալն է²:

Հետազոտության շրջանակներում առանձնացվել էին վարկային կազմակերպությունների «Համանման խմբեր»՝ ելնելով որոշակի հատկանիշների նմանությունից³: Սթրես թեստի կիրառումը վարկային կազմակերպությունների համար թույլ կտա բացահայտել դրանց առանձին խմբերի խոցելիության աստիճանը և ռիսկերի հանդեպ ֆինանսապես կայուն լինելու կամ չլինելու հանգամանքը: Հիմնական հիպոթեզը այն է, որ տարբեր խմբերի մեջ ներառված կազմակերպությունների համար այս կամ այն ռիսկի ազդեցությունը կապիտալի վրա տարբեր ուժգնություն է ունենալու: Սա հատկապես բխում այն հանգամանքից, որ «համանման խմբերի» կազմման ժամանակ որպես հատկանիշ օգտագործվել է նրանց լներիջը, ինչը ենթադրում է՝ ցածր լներիջ ունեցող կազմակերպությունները ռիսկի ի հայտ գալու դեպքում կապիտալի

¹ Այստեղ խոսք է գնում այն վերահսկողության մասին, որն իրականացնում են պետական լիազորված մարմինները, որոնց վրա դրված է ֆինանսական համակարգի վերահսկողության գործառնությունը,

² Rick Bookstaber, Jill Cetina, Greg Feldberg, Mark Flood, and Paul Glasserman, “*Stress Tests to Promote Financial Stability: Assessing Progress and looking to the Future*”, Office of Financial Research, U. S. Department of Treasury, Working Paper #0010, 18.07.2013, pp. 14.

³ ԼԼՈՆ ԱԼԻԽԱՆՅԱՆ, ««Համանման խմբերի» առանձնացումը՝ ըստ ՀՀ վարկային կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների», Ֆինանսներ և Էկոնոմիկա, 5-6 (201-202), 2017

ավելի մեծ մասնաբաժին կկորցնեն, քան բարձր լներից ունեցողները: Հետազոտությունն իրականացնելիս դիտարկվել են հետևյալ ռիսկերը *վարկային ռիսկը, արտարժութային ռիսկը, տոկոսադրույքի ռիսկը* և *գործառ-նական ռիսկը*: Վերջին երեքը միասին վերցված շուկայական ռիսկն են: Հաշվարկներ իրականացնելիս տեղեկատվության ձեռք բերման ժամանակ առաջացել են որոշ կազմակերպությունների համար տվյալների հայթայթման դժվարություններ: Մասնավորապես որոշ կազմակերպություններ իրենց հրապարակվող հաշվետվություններում հասանելի չեն դարձրել մեր հետազոտության շրջանակներում հաշվարկվող բանաձևերի առանձին բաղադրիչների արժեքները:

Աղյուսակ 1. Վարկային ռիսկի սթրես թեստի ամփոփ ներկայացումը ըստ «համանման խմբերի»⁴

Խումբ Ա				
Հերթական համարը	Կորստի չափը	Կապիտալ	Կորուստ/Կապիտալ	Կապիտալը արժեզրկումը նվազեցնելուց հետո
1	697,910	1,390,025	50%	692,115
2	1,095,118	1,816,174	60%	721,056
3	278,228	830,863	33%	552,635
4	279,712	189,896	147%	(89,816)
5	1,108,778	2,389,352	46%	1,280,574
6	573,053	953,353	60%	380,300
7	-	-	-	-
8	-	1,245,194	-	-
9	2,601,547	6,554,281	40%	3,952,734
Խումբ Բ				
1	-	-	-	-
2	129,616	263,699	49%	134,083
3	69,367	466,908	15%	397,541
4	-	1,617,210	-	-
5	1,174,517	5,906,553	20%	4,732,036
Խումբ Գ				
1	1,571,046	15,799,910	10%	14,228,864
2	253,928	1,919,993	13%	1,666,065
3	53,581	545,364	10%	491,783
4	56,356	1,106,913	5%	1,050,557
5	220,462	1,355,687	16%	1,135,225
Խումբ Դ				
1	990,858	3,469,606	29%	2,478,748
2	625,263	2,294,806	27%	1,669,543
3	627,487	2,238,471	28%	1,610,984
Խումբ Ե				
1	3,949,079	23,414,906	17%	19,465,827
2	3,485,564	93,536,883	4%	90,051,319

Վարկային ռիսկի սթրես թեստի իրականացման համար ընտրվել է վարկային կազմակերպությունների վարկային պորտֆելի 10%-ի դուրս գրման սցենարը: Վարկային կազմակերպության կորստի չափի և հետևաբար նաև կապիտալից նվազեցվող մեծությունը ստանալու համար հաշվարկվել է վար-

⁴ Այն կազմակերպությունների դիմաց, որոնց տվյալները հասանելի չեն, դրվել է (-):

կային պորտֆելի և այդ վարկային պորտֆելին համապատասխանող պահուստի 10%-ը: Վերջիններիս տարբերությունն էլ հենց կորստի մեծությունն է: Կորուստ հարաբերած կապիտալի մեծությունը ցույց է տալիս թե կորուստը կապիտալի, որ մասն է կազմում: Այդուսակ 1-ում կարող ենք տեսնել, որ այն կազմակերպությունների համար, որոնք ներառված են «Ա» խմբում այդ հարաբերակցությունը զգալի բարձր է քան «Բ» խմբում, իսկ «Բ» խմբի համար՝ քան «Գ»-ում: Սա հաստատում է այն սկզբնական հիպոթեզը, որ ցածր լներից ունեցող կազմակերպությունների վրա վարկային ռիսկի ազդեցությամբ առաջացող կորուստը ավելի ծանր հարված է հասցնում կապիտալին, հետևաբար նման կազմակերպությունները պետք է առավել ուշադիր լինեն ինչպես իրենց պասիվների կառուցվածքի, այնպես էլ վարկային ռիսկի կառավարման նկատմամբ: «Ա» խմբի 4-րդ կազմակերպության մոտ վարկային պորտֆելի 10% արժեզրկումը հանգեցնում է սնանկության. անգամ 7% արժեզրկումը բավարար է, որպեսզի կորուստը կապիտալն ամբողջությամբ կլանի, ուստի այս կազմակերպության ղեկավար մարմինները, ինչպես նաև վերահսկող մարմինները պետք է ուշադիր լինեն կառավարվող պորտֆելի որակի նկատմամբ: Վերջինս վերաբերում է նաև խումբ «Բ»-ի 2-րդ և խումբ «Ա»-ի 1-ին ու 2-րդ կազմակերպություններին, որը դիտարկված սցենարի տեղի ունենալու պարագայում կխախտի ընդհանուր և հիմնական կապիտալի նորմատիվային պահանջը, որն է 150 մլն ՈւՎԿ-ների համար ընդհանրապես և 1 մլրդ այն ՈւՎԿ-ների համար, որոնք իրականացնում են արտարժույթի առք ու վաճառք, հրապարակային օֆերտայով պարտատոմսերի միջոցով ներգրավում են միջոցներ ֆիզիկական անձանցից և ներգրավել են 30 մլն ՀՀ դրամ և ավել գումար կանոնադրական կապիտալում 5 %-ից փոքր մասնակցություն ունեցող ֆիզիկական անձից⁵:

Շուկայական ռիսկի սթրես թեստը իրականացվել է նրա երեք բաղկացուցիչների առանձին-առանձին թեստավորման միջոցով: Այդ երեք բաղադրիչներն են *արտարժույթային ռիսկը*, *տոկոսադրույթի ռիսկը* և *գործառնական ռիսկը*⁶:

Արտարժույթային ռիսկ: Ազգային արժույթի նկատմամբ արտարժույթի փոխարժեքի տատանման հետևանքով վարկային կազմակերպությունների սպասվող հավանական կորուստների կամ օգուտների գնահատման համար ընտրել ենք GAP մոդելը: GAP մոդելը թույլ է տալիս ստանալ արտարժույթի փոխարժեքի դիտարկվող փոփոխության հետևանքով վարկային կազմակեր-

⁵ Roger M. Stein, “The Role Of Stress Testing In Credit Risk Management”, Journal of Investment Management, Vol. 10, No. 4, (2012), pp. 64-90.

⁶ “Stress Testing At Major Financial Institutions: Survey Results and Practice”, Committee On Global Financial System, BIS, January 2005.

պության արտարժույթային միջոցների վերազնահատման արդյունքում վարկային կազմակերպության գնահատվող կորուստը կամ օգուտը: Արտարժույթի ռիսկը գնահատելու համար արտարժույթային պարտավորությունները հանվում են արտարժույթային ակտիվներից՝ ստանալով ճեղքվածքը (GAP):

$$GAP = F \times A - F \times L, \text{ որտեղ՝}$$

F – փոխարժեքի կուրսն է,

A – ակտիվի արժեքն է արտարժույթով,

L – պարտավորության արժեքն է արտարժույթով,

GAP – արտարժույթային ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է (ճեղքվածքը):

Բացասական ճեղքվածքի դեպքում (կարճ դիրք) արտարժույթի փոխարժեքի աճը կազմակերպությանը կորուստ կբերի: Ի հակադրություն վերջինիս, դրական ճեղքվածքի դեպքում (երկար դիրք) արտարժույթի փոխարժեքի նվազումը կազմակերպությանը կորուստ կբերի: Այս մոդելում դիտարկվող GAP-ը բնորոշում է արտարժույթային միջոցների կուտակային ճեղքվածքը, այսինքն՝ դիտարկվում են ամբողջ արտարժույթային ակտիվները և պարտավորությունները (յուրաքանչյուր արտարժույթի համար)՝ անկախ դրանց տեղաբաշխման և ներգրավման ժամկետայնություններից: Նշվածի հիմնավորումը կայանում է նրանում, որ արտարժույթի փոխարժեքի տատանման դեպքում վերազնահատվում են այդ արտարժույթով ներգրավված և տեղաբաշխված բոլոր միջոցները:

Ճեղքվածքի և կապիտալի հարաբերակցությունը ցույց է տալիս ինչպես արտարժույթային ռիսկի ազդեցության ուղղությունը (դրական կամ բացասական GAP), այնպես էլ արտարժույթային բաց դիրքի կապիտալով ապահովվածության մակարդակը: Հատկանշական է, որ արտարժույթային ռիսկի GAP մեթոդով վարկային կազմակերպության հավանական կորուստը գնահատելիս արտարժույթային փոխարժեքի փոփոխության մակարդակը վերցվում է կամայական մեծություն: Մեր ուսումնասիրության շրջանակներում այդ մեծությունը վերցվել է 10%: Ի դեպ այն կազմակերպությունների համար, որոնց արտարժույթային զուտ դիրքը դրական է արտարժույթը արժեզրկել ենք 10 տոկոսով, իսկ այն կազմակերպությունների համար, որոնց զուտ դիրքը բացասական է արժևորել ենք 10 տոկոսով: Ինչպես երևում է աղյուսակ 2-ից խումբ Ա-ի 4-րդ կազմակերպությունը փոխարժեքի 10% տատանման դեպքում կապիտալը նվազում է այնքանով, որ խախտվում են ընդհանուր և հիմնական կապիտալի նվազագույն մեծության նորմատիվները (150 մլն) մոտ 45 մլն դրամի չափով: Մնացած աղյուսակ 2-ում ներառված կազմակերպությունների համար կապիտալի նվազման առումով առանձնապես խնդիրներ առաջ չեն գալիս, բացառությամբ խումբ Բ-ի 2-րդ անդամի, որի զուտ արտարժույթային դիրքը հսկայական է (մոտ 1 մլրդ), և կորստի չափով նվազեցրած կա-

պիտալը մոտենում է կապիտալի նվազագույն պահանջի նորմատիվային սահմանին: Նշենք, որ գործող օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար կապիտալով արտարժութային ռիսկի, ոչ էլ նրա որևէ մի մասի ծածկման պահանջ չի դրված, ինչը վերը նշված կազմակերպությունների պարագայում նպատակահարմար կլիներ:

Աղյուսակ 2. Արտարժութային սթրես թեստի ամփոփ ներկայացումը ըստ «համանման խմբերի»

խումբ Ա					
Չերթական համարը	Զուտ դիրքը (GAP)	Կապիտալ	Զուտ դիրք/Կապիտալ	Կորուստի մեծությունը (GAP*10%)	Կապիտալը՝ կորուստը նվազեցրած
1	468,116	1,390,025	34%	46,812	1,343,213
2	515,883	1,816,174	28%	51,588	1,764,585
3	(64,223)	830,863	-8%	(6,422)	824,440
4	(847,972)	189,896	-447%	(84,797)	105,098
5	(63,015)	2,389,352	-3%	(6,302)	2,383,050
6	18,107	953,353	2%	1,811	951,542
7	-	-	-	-	-
8	-	1,245,194	-	-	-
9	529,838	6,554,281	8%	52,984	6,501,297
խումբ Բ					
1	-	-	-	-	-
2	(1,022,650)	263,699	-388%	(102,265)	161,434
3	-	466,908	-	-	-
4	-	1,617,210	-	-	-
5	(349,868)	5,906,553	-6%	(34,987)	5,871,566
խումբ Գ					
1	6,026	15,799,910	0.04%	603	15,799,307
2	439,615	1,919,993	23%	43,962	1,876,031
3	218,107	545,364	40%	21,811	523,553
4	211,988	1,106,913	20%	21,199	1,085,714
5	454,987	1,355,687	34%	45,499	1,310,188
խումբ Դ					
1	-	3,469,606	-	-	-
2	0	2,294,806	0%	0	2,294,806
3	-	2,238,471	-	-	-
խումբ Ե					
1	298,529	23,414,906	1%	29,852	23,385,053
2	4,113,490	93,536,883	4%	411,349	93,125,534

Տոկոսադրույքի ռիսկ: Տոկոսադրույքի փոփոխության հետևանքով վարկային կազմակերպության սպասվող հավանական կորուստների կամ օգուտների գնահատման ամենատարբեր մոդելներից ընտրվել է դյուրացիայի մոդելը: Դյուրացիայի մոդելը ցույց է տալիս տոկոսադրույքի փոփոխության արդյունքում կապիտալի տնտեսական արժեքի փոփոխությունը՝ հաշվի առնելով ներգրավված պարտավորությունների և տեղաբաշխված ակտիվների ժամկետայնության անհամապատասխանությունը: Տոկոսադրույքի ռիսկի հաշվարկի ժամանակ օգտվել են հրապարակվող աուդիտորական եզրակացություններում առկա ակտիվների և պարտավորությունների ժամկետայնությունների աղյուսակներից, ինչպես նաև միջին տոկոսադրույքներից՝

ակտիվները և պարտավորությունները ներկա արժեքի բերելու համար⁷: Դյուրացիայի ամբողջական ճեղքվածքը գնահատելու համար պետք է որոշել տվյալ կազմակերպության ակտիվների պորտֆելի և պարտավորությունների պորտֆելի դյուրացիան: Դա հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$D_A = X_{1A}D_1^A + X_{2A}D_2^A + \dots + X_{nA}D_n^A,$$

$$D_L = Y_{1L}D_1^L + Y_{2L}D_2^L + \dots + Y_{nL}D_n^L,$$

որտեղ X_iA -ը i ակտիվի կշիռն է ընդհանուր ակտիվներում, Y_jL -ը j պարտավորության կշիռն է պարտավորություններում, D_iA -ը i ակտիվի դյուրացիան (միջին կշռված ժամկետայնություն) է, իսկ D_jL -ը j պարտավորության դյուրացիան է:

$$D_{GAP} = D_A - D_L * k,$$

$$k = \frac{L}{A},$$

որտեղ՝ L - պարտավորություններ, A – ակտիվներ:

Դյուրացիայի ճեղքվածքի և կապիտալի տնտեսական արժեքի կապը ցույց տանք հետևյալ հավասարումների միջոցով.

$$A = L + E,$$

$$\Delta A = \Delta L + \Delta E,$$

$$\Delta E = \Delta A - \Delta L: (1)$$

Այսինքն՝ տոկոսադրույքների փոփոխության դեպքում տվյալ ֆինանսական կազմակերպության կապիտալի փոփոխությունը հավասար է հաշվեկշռի աջ և ձախ կողմերում ակտիվների ու պարտավորությունների փոփոխության տարբերությանը: Հավասարում (1)-ի մեջ տեղադրելով ΔA -ի և ΔL -ի դյուրացիայի մոդելից ստացվող արժեքները՝

$$\Delta A = -D_A * A * \left(\frac{\Delta R}{[1 + R]} \right),$$

$$\Delta L = -D_L * L * \left(\frac{\Delta R}{[1 + R]} \right),$$

ստանում ենք.

$$\Delta E = -(D_A - D_L * k) * A * \left(\frac{\Delta R}{[1 + R]} \right), (2)$$

որտեղ՝

R -ը ակտիվների և պարտավորությունների միջին կշռված շուկայական տոկոսադրույքն է, ΔE -ն կապիտալի տնտեսական արժեքի փոփոխությունը:

⁷ “Stress testing the UK banking system: key elements of the 2017 stress test”, Bank of England, March 2017, pp. 26.

Բանաձև (2)-ի աջ մասը կարող ենք բաժանել 3 մասի և ստանալ կապիտալի փոփոխության մեծության վրա ազդող 3 գործոն.

1. Ըստ լևերիջի ճշգրտված դյուրացիայի ճեղքվածքը ($D_A - D_L * k$). սա արտացոլում է ակտիվների և պարտավորությունների դյուրացիաների անհամապատասխանության աստիճանը: Որքան մեծ է ճեղքվածքի բացարձակ մեծությունը, այնքան մեծ ռիսկ է կրում տվյալ ֆինանսական կազմակերպությունը տոկոսադրույքի փոփոխության արդյունքում.

2. Կազմակերպության մեծությունը (A). որքան մեծ են կազմակերպության ակտիվները, այնքան ավելի մեծ կլինեն կազմակերպության կորուստները տոկոսադրույքի փոփոխության արդյունքում անկախ այդ փոփոխության մեծությունից և դյուրացիայի ճեղքվածքից.

3. Տոկոսադրույքի փոփոխության չափը ($\frac{\Delta R}{[1+R]}$). որքան մեծ է դրույքի փոփոխությունը, այնքան մեծ՝ կորուստը այլ հավասար պայմաններում:

Աղյուսակ 3. Տոկոսադրույքի ռիսկի հիման վրա սթրես թեստի արդյունքների ամփոփումը ըստ «համանման խմբերի»

Խումբ Ա				
Չերթական համարը	Կապիտալ	$(D_A - D_L * k)$	ΔE	Կապիտալը նվազեցրած
1	1,390,025	0.05	(7,762)	1,382,263
2	1,816,174	0.55	(132,751)	1,683,423
3	830,863	-	-	-
4	189,896	-	-	-
5	2,389,352	-0.06	16,770	2,372,582
6	953,353	-	-	-
7	-	-	-	-
8	1,245,194	-	-	-
9	6,554,281	-0.02	9,777	6,544,504
Խումբ Բ				
1	-	-	-	-
2	263,699	-	-	-
3	466,908	-	-	-
4	1,617,210	-	-	-
5	5,906,553	-0.12	34,809	5,871,744
Խումբ Գ				
1	15,799,910	0.62	(233,061)	15,566,849
2	1,919,993	-	-	-
3	545,364	2.16	(31,342)	514,022
4	1,106,913	0.22	(5,548)	1,101,365
5	1,355,687	3.27	(167,178)	1,188,509
Խումբ Դ				
1	3,469,606	-	-	-
2	2,294,806	0.90	(172,047)	2,122,759
3	2,238,471	-	-	-
Խումբ Ե				
1	23,414,906.00	-	-	-
2	93,536,883.00	-	-	-

Չնայած վարկային կազմակերպությունների զգալի մասի համար հնարավոր չեղավ հաշվել տոկոսադրույքի ռիսկը, այնուամենայնիվ մնացածի

տվյալներով իրականացված հաշվարկները շարունակում են հետաքրքիր լինել մեր հետազոտության շրջանակներում: Նախ՝ նշենք, որ դիտարկված սցենարի շրջանակներում ոչ մի կազմակերպություն կապիտալի նվազագույն պահանջի նորմատիվ չի խախտել: Երկրորդ՝ ակտիվների և պարտավորությունների իմունիզացվածության տեսանկյունից պետք է նշել, որ խումբ Գ-ի 3-րդ և 5-րդ անդամների մոտ իմունիզացվածությունը մակարդակը ամենից ցածրն է: Սրա հետ մեկտեղ հաշվի առնելով, որ վարկային կազմակերպությունների նկատմամբ չի կիրառվում տոկոսադրույքի ռիսկը կապիտալի միջոցով ծածկելու նորմատիվներ՝ այս ռիսկը նույնպես մնում է բաց, իսկ ռիսկի կառավարումը կազմակերպության ղեկավարի հայեցողությանը:

Գործառնական ռիսկի մեծության հաշվարկը արվել է «Բանկերի գործունեության կարգավորումը, բանակային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի՝ «Գործառնական ռիսկի հաշվարկ» հավելված 2-ի 2-րդ գլխում նկարագրված մեթոդաբանությամբ⁸: Հաշվարկի համար կիրառված բանաձև ունի հետևյալ տեսքը՝

$$Q_{\Omega} = \frac{(\frac{1}{4} S * Q + Q E_{S-1} * Q + Q S_{S-2} * Q)}{L},$$

որտեղ՝

Q_{Ω} -հիմնական բնութագրիչների մոտեցման համաձայն հաշվարկված գործառնական ռիսկն է,

$Q E_{S-1}$ -կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկմանը նախորդող տարվա հունվարից դեկտեմբերն ընկած տարվա (այսուհետև հաշվետու տարի) զուտ եկամուտն է,

$Q E_{S-1}$ -կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկմանը նախորդող 2-րդ հաշվետու տարվա զուտ եկամուտն է,

$Q E_{S-2}$ -կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկմանը նախորդող 3-րդ հաշվետու տարվա զուտ եկամուտն է,

$Q = 15\%$,

L -վերջին երեք տարիների 0-ից բարձր զուտ եկամուտ ունեցած տարիների թիվն է:

⁸ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանակային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2

Աղյուսակ 4. Գործառնական ռիսկի հիման վրա սթրես թեստի արդյունքների ամփոփումը ըստ «համանման խմբերի»

Հերթական համարը	Կապիտալ	Գործառնական ռիսկի մեծությունը	Նվազեցված կապիտալը
Խումբ Ա			
1	1,390,025	21,255	1,368,770
2	1,816,174	34,712	1,781,462
3	830,863	9,636	821,227
4	189,896	7,754	182,142
5	2,389,352	46,532	2,342,820
6	953,353	11,450	941,903
7	-	-	-
8	1,245,194	16,782	1,228,412
9	6,554,281	60,396	6,493,885
Խումբ Բ			
1	-	-	-
2	263,699	1,863	261,836
3	466,908	8,984	457,924
4	1,617,210	39,898	1,577,312
5	5,906,553	41,207	5,865,346
Խումբ Գ			
1	15,799,910	253,228	15,546,682
2	1,919,993	29,130	1,890,863
3	545,364	4,001	541,363
4	1,106,913	4,961	1,101,952
5	1,355,687	8,529	1,347,158
Խումբ Դ			
1	3,469,606	21,898	3,447,708
2	2,294,806	45,486	2,249,320
3	2,238,471	27,111	2,211,360
Խումբ Ե			
1	23,414,906	152,015	23,262,891
2	93,536,883	492,174	93,044,709

Գործառնական ռիսկի հաշվարկը իրականացված սթրես թեստերից առվել ամբողջական է: Այն հաշվարկվել է ամենապարզ մոտեցմամբ: Արդյունքում տեսնում ենք, որ գործառնական ռիսկը դիտարկված վարկային կազմակերպություններին չի սպառնում⁹:

Ամփոփելով առանձնացնեք այն հիմնական եզրակացությունները, որ արվել այն աշխատանքի արդյունքում.

1. Վարկային ռիսկի սթրես թեստավորումը ցույց տվեց, որ խնդիրների մեծ մասը առաջանում է այն կազմակերպություններում, որոնք ներառված են «Ա» խմբում: Սա սպասելի էր, քանի որ «Ա» խմբում ի սկզբանե ներառված էին ցածր լեռնիջով կազմակերպություններ (30% և ցածր): Հետևաբար, ցածր լեռնիջը սթրեսային իրավիճակներում կարող է զգալի վնաս հասցնել կազմա-

⁹ Ramy Farha, Tom Ivell, Evan Sekeris, "Operational Risk Stress Testing; Emerging Best Practices", Oiver Wyman financial services, 2015, pp. 1-12.

կերպությանը՝ նորմատիվի խախտումից մինչև սնանկացում: Վերջինս թույլ չտալու համար պետք է ավելացնել կապիտալի մակարդակը:

2. Շուկայական ռիսկի սթրես թեստավորումը արվեց 3 ուղղությամբ՝ արտարժութային ռիսկ, տոկոսադրույքի ռիսկ և գործառնական ռիսկ:

- Արտարժութային ռիսկը ուսումնասիրելիս հայտնաբերեցինք երկու կազմակերպություն (խումբ «Ա»-ի 4 և խումբ «Բ»-ի 2), որոնց արտարժութային զուտ դիրքերը չափազանց մեծ էին (847,972 և 1,022,650 հազ. ՀՀ դրամ համապատասխանաբար), իսկ առաջինի մոտ սցենարի տեղի ունենալը հանգեցնում էր նորմատիվի խախտման 44 902 հազ. ՀՀ դրամ չափով (150 000 - 105 098):

- Տոկոսադրույքի ռիսկի տեսանկյունից երկու կազմակերպություն ունեին բավական մեծ դյուրացիայի ճեղքվածքներ (2.16 և 3.27): Սա վկայում է իմունիզացիայի բացակայության վերաբերյալ:

- Գործառնական ռիսկի առումով բոլոր դիտարկվող կազմակերպություններում սթրես սցենարի արդյունքում խնդիրներ չեն հայտնաբերվել:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ պարզ է դառնում, որ տոկոսադրույքի ռիսկը զսպելու համար նպատակահարմար է դրա նկատմամբ կապիտալի նորմատիվի սահմանումը, որպեսզի դա լինի ամբողջությամբ կամ մասնակի ծածկված, ինչպես նաև դրվի ակտիվների և պարտավորությունների պորտֆելների իմունիզացիայի պահանջ: Իսկ արտարժութային ռիսկի պարագայում խստացնել կապիտալով արտարժութային ռիսկի ծածկույթի մակարդակը: Օրինակ՝ կանոնակարգ 14-ով¹⁰ պահանջվում է, որպեսզի ծածկված լինի ամսվա ընթացքում ձևավորված այն օրվա արտարժութային դիրքի 12%-ը, որի դրությամբ այն առավելագույն է: Եթե 12 %-ի փոխարեն ծածկույթը սահմանվի 20.8%, ապա արտարժութային 10%-անոց շոկ տեղի ունենալու դեպքում մնացած կապիտալը բավարար կլինի արտարժութային դիրքի 12% ծածկման համար:

¹⁰ «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, Վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14

Լևոն ԱԼԻԽԱՆՅԱՆ

Վարկային կազմակերպությունների ռիսկերի գնահատումը սթրես թեստերի միջոցով

Բանալի բառեր. սթրես թեստ, «համանման խմբեր», վարկային ռիսկ, շուկայական ռիսկ, արտարժույթային ռիսկ, տոկոսադրույթի ռիսկ

Սթրես թեստերը, որոնց օգտագործումը բխում է ռիսկերի կառավարման անհրաժեշտությունից, պետք է կիրառվեն վարկային կազմակերպությունների «համանման խմբերի» վերլուծություն ժամանակ: Դա հնարավորություն կտա հասկանալ առանձին կազմակերպությունների և դրանց խմբերի թուլությունները տարբեր սցենարների տեղի ունենալու պարագայում: «Համանման խմբերի» խոցելի տեղերի հայտնաբերումն և համեմատությունը միմյանց մեջ թույլ կտան պատկերացում կազմել ֆինանսական շուկայի՝ վարկային կազմակերպությունների հատվածի ֆինանսական կայունության մասին:

Левон АЛИХАНИЯН

Оценка рисков кредитных организаций с помощью стресс тестов

Ключевые слова: стресс тест, "группы похожих организаций", кредитный риск, рыночный риск, валютный риск, процентный риск

Стресс тесты, применение которых обусловлено управлением рисками, должны быть использованы при анализе "групп похожих организаций". Это даст возможность понять слабости отдельных фирм и их групп при различных сценариях развития событий. Выявление уязвимых мест "групп похожих организаций" и их сравнение дадут возможность иметь представление о финансовом рынке с точки зрения финансовой стабильности кредитных организаций.

Levon ALIKHANYAN

The assessment of risks in credit organizations with stress tests

Key words: stress test, "peer groups", credit risk, market risk, foreign exchange risk, percentage risk

Stress tests the use of which is necessary for the risk management should be used during peer group analysis of credit organizations. It will help to understand the weaknesses of credit organizations on their own and within "peer groups" as a result of different stress testing scenarios. The comparison of these weaknesses of "peer groups" will give a clearer picture of financial stability in the credit organizations' sector of financial system.